

ու հոգին էր այդ շարժումին, եւ Գրիգոր Զօհրապ անոր անմիջական աջակիցներէն մին, միւսներն ըլլալով ամբողջ հոյլ մը երիտասարդ գրագէտներու, զոր կը կազմէին Լեւոն Բաշալեան, Մելքոն Կիրճեան, Հրանտ Ասատուր, Տիգրան Կամսարական, Երուանդ Օտեան եւ ուրիշներ, բոլորն ալ նոյն իսկալով գօտեպնդուած եւ միեւնոյն ոգիով լեցուած:

Այդ շրջանէն առաջ ալ թրքահայութիւնն ունէր իր շատ տաղանդաւոր գրողները, բայց անոնք անհատներ էին միայն, առանց հաւաքական աշխատանքի եւ առանց ունէ նոր շարժում յատկանշելու: *Հայրենիքի* սերունդն էր որ կուգար գրական եւ մտաւորական առաջին շարժումը գլուխ հանելու, իր որոշ դրոշմը դնելով ժամանակակից հայ կեանքին վրայ:

Առաջին ազդեցութիւնը, զոր Արփիար, Զօհրապ եւ իրենց ընկերները ունեցան, մեր աշխարհաբար լեզուին վրայ էր. անոնք մաքրեցին եւ ծաղկեցուցին աշխարհաբարը, որ տասնեակ տարիներ առաջ թէւ Մամուրեաններու եւ Միսաքեաններու շնորհիւ սկսած էր զարգանալ, սակայն, յետոյ, գրաբարեաններու յետադարձ շարժումով, վերստին խաթարուած էր:

Երկրորդը՝ այն ժողովրդասէր ու ժողովրդավար ոգին էր, որով այդ սերունդը խանդավառուած էր եւ զոր մտցուց հրապարակագրութեան եւ ընդհանրապէս հայ գրականութեան մէջ:

Երրորդ նորութիւնը այդ հոսանքին՝ իրապաշտութիւնն էր, զոր *Հայրենիքեանները* առաջին անգամ բերին թրքահայ գրականութեան մէջ, ֆրանսացի ժամանակակից գրողներու՝ Զօլայի, Տօփասանի եւ ուրիշներու ազդեցութեան տակ: Այդ ատեններն էր որ Արփիար իր վիպակները գրեց եւ Զօհրապ իր անդրանիկ գործը՝ *Անհետացած սերունդ մը*, որ առաջին յաջող գործն է իբր իրապաշտ ձգտումի արդիւնք: Տիգրան Կամսարական եւս, Տօտէի ներշնչման տակ, կը գրէր իր մեծ վէպը՝ *Վարժապետին աղջիկը*²⁴: